թողիկոսը նրան սիրալիր նամակ գրեց, իսկ այն պիղծ Մահմադը թքեց նամակի վրա և պատռեց ու բազմաթիվ հայհոյանքներ տվեց կաթողիկոսին: Քալանթարը այս լսելով ծիծաղեց: Եկան պատմեցին կաթողիկոսին, դրա համար նա մահու չափ խոր խոցվեց: Հրավիրակներ ուղարկեց, հավաքվեցին բոլոր գավառապետերը, տանուտերերը, քննություն կատարեցին իշխանական հարկերի մասին: Նրա վրա դիզեցին անչափ, անհամար (վատնումներ): Երբ նա տեսավ, թե բարդվեց իր վրա և չի կարող հաշիվ տալ, այնուհետև սկսեց աղերսել, աղաղակում էր միջնորդներ մեջտեղ գցելով, որ հաշտվի նրա հետ, բայց չեղավ: Այդ պատճառով հուսահատվեց ամեն կողմերից, քանզի պահանջեցին՝ ճշտիվ հաշիվ տալ: Ապա իր ձեռքով մուրհակ գրեց այսպես, թե ես՝ Ղուբաթ, հայոց ազգին տալիս եմ ստորագրություն, թե ես կամ մեկը իմ ազգականներից եթե քալանթարություն ցանկանաք կամ մտնեք այդ գործի մեջ, յոթ հազար թուման տանք արքունիքին, և մեր գլուխը կտրվի: Այս գրությունը գրեց, տվեց կաթողիկոսին, որ դեռևս գտնվում է Սուրբ Էջմիածնում: Ղարաղուբաթին աքսորեցին, ապրում էր իբրև ռամիկներից մեկը:

Սրանից հետո Աբաս թագավորի առջև չարախոսություն եղավ Խոսրով խանից: Թագավորը Երևան ուղարկեց Մահմադ անունով մի մարդ՝ նստելու այնտեղ իբրև տեղապահ, իսկ Խոսրով խանին ուղարկել իր մոտ:

Խոսրովը գնաց Սպահան, իսկ Մահմադը նստեց տեղապահ: Այս Ղարաղուբաթը և մի իշխան, որ կարգված էր արքունուստ հարկահան, երկուսն էլ միաբանվեցին Մահմադին և առնելով նրան տարան Խոսրով խանի տունը և ցույց տվին նրան Խոսրով խանի կանանց: Ասում են, թե Մահմադը բռնի շնացավ խանի ավագ կնոջ հետ և հղիացրեց նրան: Իսկ խանը շտապ վերադարձավ եկավ Երևան: Մահմադը լսեց խանի գալը, նախապես ելավ, փախավ՝ խանից երկյուղելով:

Խանը եկավ, մտավ բերդը, և պատմեցին նրան, ինչ որ արին Ղուբաթն ու իշխանը: Խոսրովը բարկացավ, հրամայեց բռնել նրան, պարանոցին կունդ հագցնել և ոտքերը շղթայել, գցել մթին խավար ու գարշահոտ բանտում: Ոջլից, աղտից, որդերի շատությունից, մազերի երկայնանալուց վերքեր ստացավ, սատկեց:

Ապա բռնեց նրա ընկերոջը՝ արքունական ծառային, կախեց շան հետ և ծանր հարվածով սպանեց: Ապա խոշտանգում էր իր կնոջը, տեսակ-տեսակ ծեծով ու հարվածներով տանջում ու չարչարում էր նրան: Նրա կինը ուներ մի եղբորորդի, որ գրեց իր պապին, որ խանի կնոջ հայրն էր, սուրհանդակների միջոցով իմացրեց նրան դստեր տառապանքները: Նա շահի պալատի մեծերից էր, սեղանապետ էր, որ իրենք (պարսիկները) Սուբրալի բաշի են ասում, որը ինչ-որ ձևով իմացրեց թագավորին: Լսել էր նաև ծառայի սպանությունը, դրա համար բարկացավ, ուղարկեց նույն Մահմադին՝ իշխելու Երևանին, իսկ Խոսրովին աքսորել: Խոսրովը գնաց, շահի երեսը չտեսավ, այլ ծպտվեց դարվիշի կերպարանքով, փախավ Հնդկաստան և այնտեղ էլ մեռավ:

ԳԼՈՒԽ ԻԶ

ՄԱՀՆ ՈՒ ՍՊԱՆՈՒՄԸ ԹԱՀՄԱԶՂՈՒԼԻ ԽԱՆԻ

Գրեցինք Թահմազղուլի խանի գերության մասին, որ օսմանցիների Մուրադ թագավորի ժամանակ մնաց Ստամբուլում: Մուրադից հետո թագավոր դարձավ նրա Աբաս որդին: Սրա ժամանակ Թահմազը աղերսագիր գրեց եպարքոսին, որ շահին հայտնի իր մասին, թե ինքը թուրքերի թագավորին խնդրելու է, որ վերադառնա հայրենի երկիրը և այնտեղ մեռնի: Եվ եպարքոսը հայտնեց շահին, իսկ շահը բանագնացների միջոցով նրան խնդրեց՝ թուրքաց թագավորից, իսկ թուրքերի թագավորը ինքը նրա գնալու հրամանը տվեց:

Իսկ Ռոստոմ խանը, որ Թավրիզի իշխանն էր, այս ամենը չգիտեր: Երբ լսեց, մահու չափ խոր խոցվեց, քանզի թշնամի էր նրան և չէր կամենում, որ նա այստեղ գա: Քանզի նա գիտեր, թե երբ Թահմազը ավագ ու գլխավոր լիներ բոլոր խաների, ինքը նրանից փոքր կհամարվեր. վտանգի մեջ էր, ուստի նամակ գրեց օսմանցիների վեզիրին, թե ինչ խելքով եք թողնում, որ դա այստեղ գա: Քանզի որ օրը նա մտավ Պարսկաստան, կտեսնեք Ստամբուլը ձեր ձեռքից դուրս եկած, որովհետև ձեր երկրի վերուդիրը ճանաչեց և ամենը իմացավ: Եվ երբ Ռոստոմի նամակը հասավ վեզիրին, Թահմազը երեք օր առաջ դուրս էր եկել Կոստանդնուպոլսից: Նրա